ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04-1

ք.Երևան «29» «12» 2020թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գուլյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համակարգչային սարքերի և սարքավորումների, օդորակիչների սպասարկման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է Պայմանագրի Հավելված №1-ով նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին կամ մատուցել է անպատշաճ որակի ծառայություն,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայության արդյունքը և վարձատրել դրա համար, եթե մատուցված ծառայությունների որակը համապատասխանում է սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված տեխնիկական բնութագրերին և ծառայությունները մատուցվել են սույն պայմանագրի 2.4.1 կետով սահմանված ժամկետում:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ: Պատվիրատուի բանավոր կամ գրավոր հանձնարարությամբ՝ այն ստանալուց հետո եռօրյա ժամկետում, եթե Կատարողի բանավոր կամ գրավոր առաջարկությամբ և Պատվիրատուի բանավոր կամ գրավոր համաձայնությամբ այլ ժամկետներ չեն սահմանվել:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4. Եթե կատարողը ծառայությունների մատուցելիս խոտանել է իրեն հանձնված գույքը, ապա պարտավոր է իր հաշվին վերականգնել այն: Ընդ որում խոտանված գույքի վերականգնման համար գործում է սույն պայմանագրի 2.1.2 և 2.4.1 կետերով սահմանված դրույթները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված № 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2. Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3. Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4. Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **900 000 (ինը հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի 7.13 կետով նախատեսված ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրով նախատեսվող վճարման ժամանակացույցով:

Մարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ**, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

[1] Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի (պայմանագրի 7.13 կետով նախատեսված ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի) գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11. Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի №№ 1; 2 և 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13. Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Բևեռային ուղի» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Մանանդյան 25շ., բն.6
ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 90011018646	ՀՀ 1510032345990100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02228306
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«Բևեռային ուղի» ՍՊԸ-ի տնօրեն
Գ.Գուլյան	**Ա.Հակոբյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«29» «12» 2020թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04-1» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Գ. Գուլյան
____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բնեռային ուղի» ՍՊԸ-ի
տնօրեն
Ա.Հակոբյան
____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1.	50311120/501	**Համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ծառայություններ** - ծառայությունների ընթացքում օգտագործվող պահեստամասերի և օժանդակ նյութերի փոխարինում, - ծառայության մատուցման ժամկետները՝ Պատվիրատուի բանավոր կամ գրավոր հանձնարարությամբ՝ այն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կատարողի բանավոր կամ գրավոր առաջարկությամբ և Պատվիրատուի բանավոր կամ գրավոր համաձայնությամբ այլ ժամկետներ չեն սահմանվել, բացառությամբ տպիչ սարքերի, - տպիչի սարքերի լիցքավորումները մեկ ժամվա ընթացքում, - տպիչների քարթրիջները լիցքավորումից հետո տպագրվող էջերի քանակը պետք է համապատասխանի գործարանային լիցքավորմանը, թույլատրելի շեղումը ոչ ավելի 5 տոկոս, - փոխարինվող մասերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է: Ծառայությունների մատուցումը ըստ կցված գնացուցակի:	դրամ	**900 000**	1	ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական 3 տուն,	Մինչև 15.12.2021թ.

*ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ծառայություններ

Հ/Հ	Ծառայության անվանումը		Չափման միավորը	Միավորի գները
1	Համակարգչի վերանորոգում			
	1.1	Կոմպլեկտավորող մասերի փոխարինում կամ տեղադրում:	հատ	1540
	1.2	Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	495
	1.3	Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ Cooler	հատ	1650
	1.4	CPU-ի հովացուցիչի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	495
	1.5	CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ Պ4 Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ(Cooler for CPU P4 Intel original),կամ համարժեքը	հատ	2695
	1.6	RAM փոխարինում, ներառյալ DDR 2, 1GB-մից կամ համարժեքը	հատ	12000
	1.7	RAM փոխարինում, ներառյալ DDR 2, 2GB-մից կամ համարժեքը	հատ	18000
	1.8	RAM փոխարինում, ներառյալ DDR 3, 2GB-մից կամ համարժեքը	հատ	10200
	1.9	RAM փոխարինում, ներառյալ DDR 3, 4GB-մից կամ համարժեքը	հատ	16500
	1.10	RAM փոխարինում, ներառյալ DDR 4, 4GB-մից կամ համարժեքը	հատ	25000
	1.11	RAM փոխարինում, ներառյալ DDR 4, 8GB-մից կամ համարժեքը	հատ	45000
	1.12	USB ցանցային քարտ	հատ	7000
	1.13	MB նորոգում	հատ	12000
	1.14	MB փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	1100
	1.15	MB փոխարինում ներառյալ 478 սոկետ ՎԳԱ օն բորդ, (478 socket, VGA on board), կամ համարժեքը	հատ	22000
	1.16	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 945 չիպսեթ,ՊՍԻ չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(MSI Intel 945 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	27170
	1.17	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 31 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(MSI Intel 31 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	27170
	1.18	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 35 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(MSI Intel 35 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	29370
	1.19	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 43 չիպսեթ,ՊՍԻ(MSI Intel 43 chipset, PCI) կամ համարժեքը	հատ	35640
	1.20	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 45 չիպսեթ,ՊՍԻ(MSI Intel 45 chipset, PCI) կամ համարժեքը	հատ	41800
	1.21	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 945 չիպսեթ, ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 945 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	32450
	1.22	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 31 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 31 chipset,PCI-Exp) կամ համարժեքը	հատ	30800
	1.23	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 35 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 35 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	30800
	1.24	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 43 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 35 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	38500
	1.25	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 45 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 38 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	44000
	1.26	Asus H110M-K iH110 Intel 1151s. CPU ready, DMI 5GT/s, 1xPCI-e 3.0 (16x), 2PCI-e 1x, Gbt. LAN, 4xSATA3, SB5.1, 2xDDR4 2133MHz up to 32Gb, 2xUSB3.0, COM header, mATX, VGA, DVI	հատ	40000
	1.27	Asus B250M-K iB250 ntel 1151s. CPU ready, DMI 8GT/s, 1xPCI-e 3.0 (16x), 2PCI-e 1x, Gbt. LAN, 6xSATA3, SB7.1, 2xDDR4 2400/2133MHz up to 32Gb, 4xUSB3.0, mATX, VGA, DVI	հատ	50000
	1.28	Asus Prime B250-Plus iB250 Intel 1151s. CPU ready, DMI 8GT/s, 2xPCI-e 3.0 (16x/4x), 2PCI-e 1x, 2xPCI, Gbt. LAN, 6xSATA3, 1+1xM.2, SB7.1, 4xDDR4 2400/2133MHz up to 64Gb, 2xUSB3.1, 2+2xUSB3.0, 1xUSB3.0 type-C, 2+2xUSB2.0, ATX, VGA, DVI, HDMI	հատ	72000
	1.29	CPU փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	770
	1.30	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4/2.4գ 533/800 մից 478 փին (CPU P4/2,4g 533/800 mhz 478pin),կամ համարժեքը	հատ	17490
	1.31	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4/3.0գ 800մից 478 փին (CPU P4/3.0g 800mhz 478pin), կամ համարժեքը	հատ	17490
	1.32	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 ԼՋՍ775 3.0ԳՀՑ 1Մ 800ՄՀՑ (LGA775 3.0GHZ 1M 800MHZ),կամ համարժեքը	հատ	28160
	1.33	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 ԼՋՍ775 3.2ԳՀՑ 1Մ 800ՄՀՑ	հատ	29700

		(LGA775 3.2GHZ 1M 800MHZ),կամ համարժեքը		
	1.34	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 ԼԳԱ775 3.4ԳՀՑ 1Մ 800ՄՀՑ (LGA775 3.4GHZ 1M 800MHZ),կամ համարժեքը	հատ	30800
	1.35	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Դ 820 (2,8ԳՀց) ԼԳԱ775, 2x1024, 800ՄՀց (Dual Core D 820 (2,8GHz) LGA775, 2x1024, 800MHz), կամ համարժեքը	հատ	30800
	1.36	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Ե2180 (1,8ԳՀց), 1024, 800ՄՀց (Dual Core E2180 (1.8GHz), 1024, 800MHz), կամ համարժեքը	հատ	30140
	1.37	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Ե2210 (2,2ԳՀց), 1024, 800ՄՀց (Dual Core E2210 (2.2GHz), 1024, 800MHz), կամ համարժեքը	հատ	30140
	1.38	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Ե2220 (2.4ԳՀց), 1024, 800ՄՀց (Dual Core E2220 (2.4GHz), 1024, 800MHz), կամ համարժեքը	հատ	30140
	1.39	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե7300 (2,66ԳՀց) , 3072, 1066ՄՀց (Core 2 Duo E7300 (2,66GHz), 3072, 1066MHz), կամ համարժեքը	հատ	49500
	1.40	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե7400 (2,8ԳՀց), 3072, 1066ՄՀց (Core 2 Duo E7400 (2,8GHz), 3072, 1066MHz), կամ համարժեքը	հատ	49500
	1.41	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե7500 (2,93ԳՀց) , 3072, 1066ՄՀց (Core 2 Duo E7500 (2,93GHz), 3072, 1066MHz), կամ համարժեքը	հատ	49500
	1.42	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե8300 (2,8ԳՀց), 6144, 1333ՄՀց (Core 2 Duo E8300 (2,8GHz), 6144, 1333MHz), կամ համարժեքը	հատ	66000
	1.43	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե8500 (3,16ԳՀց) , 6144, 1333ՄՀց (Core 2 Duo E8500 (3,16GHz), 6144, 1333MHz), կամ համարժեքը	հատ	71500
	1.44	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Քուադ Ք8200 (2.66ԳՀց) , 4096, 1333ՄՀց (Core 2 Quad Q8200 (2,66GHz), 4096, 1333MHz), կամ համարժեքը	հատ	67100
	1.45	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Քուադ Ք9400 (2.66ԳՀց) , 6144, 1333ՄՀց (Core 2 Quad Q9400 (2,66GHz), 6144, 1333MHz), կամ համարժեքը	հատ	80300
	1.46	RAM փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	770
	1.47	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2ԳԲ 1333ՄՀՑ (DDR3 2GB), կամ համարժեքը	հատ	15000
	1.48	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4ԳԲ 1333ՄՀՑ (DDR3 4GB), կամ համարժեքը	հատ	26000
	1.49	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՄՀՑ (DDR2 1024M 667/800MHZ), կամ համարժեքը	հատ	11550
	1.50	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՄՀՑ (DDR2 2048M 667/800MHZ), կամ համարժեքը	հատ	20000
	1.51	SVGA փոխարինում կամ տեղադրում(առանց պահեստամասերի)	հատ	550
	1.52	SVGA փոխարինում ներառյալ ԷՋԻՊի 256Մբ(AGP 256Mb) կամ համարժեքը	հատ	19500
	1.53	SVGA փոխարինում ներառյալ ԷՋԻՊի 512Մբ(AGP 512Mb) կամ համարժեքը	հատ	28000
	1.54	SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 256Մբ ՊԻՍԻԱյ-Էքսպ(Ati Radeon 256Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	15400
	1.55	SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 512Մբ ՊԻՍԻԱյ-Էքսպ(Ati Radeon 512Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	24000
	1.56	SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 1Գբ ՊԻՍԻԱյ-Էքսպ(Ati Radeon 1Gb PCI Exp) կամ համարժեքը	հատ	24200
	1.57	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ 256Մբ ՊԻՍԻԱյ-Էքսպ(Nvidia GF GS 256Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	15400
	1.58	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ 512Մբ ՊԻՍԻԱյ-Էքսպ(Nvidia GF GS 512Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	22550
	1.59	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 256Մբ ՊԻՍԻԱյ-Էքսպ(Nvidia GF GT 256Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	19250
	1.60	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 512Մբ ՊԻՍԻԱյ-Էքսպ(Nvidia GF GT 512Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	20900
	1.61	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 1Գբ ՊԻՍԻԱյ-Էքսպ(Nvidia GF GT 1Gb PCI Exp) կամ համարժեքը	հատ	26400
	1.62	HDD փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	550
	1.63	HDD փոխարինում ներառյալ ՀԴԴ 500 ԳԲ 7200ռպմ (HDD 500GB 7200RPM), կամ համարժեքը	հատ	34500
	1.64	HDD փոխարինում ներառյալ ՀԴԴ 1 ՏԲ 7200ռպմ (HDD 1 TB 7200RPM), կամ համարժեքը	հատ	46300
	1.65	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 2 ՏԲ ՍԱՏԱ, 7200ռպմ, 8ՄԲ (HDD 2 Tb SATA , 7200 rpm, 8MB),կամ համարժեքը	հատ	66500
	1.66	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 1 ՏԲ ՍԱՏԱ , 7200ռպմ (HDD 1 Tb SATA , 7200 rpm), կամ համարժեքը	հատ	46300
	1.67	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 500Գբ ՍԱՏԱ, 7200ռպմ (HDD 500 Gb	հատ	48000

		SATA, 7200 rpm), կամ համարժեքը		
	1.68	CD-RW, DVD-RW նորոգում	հատ	1100
	1.69	CD-RW, DVD-RW փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	550
	1.70	DVD-RW փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW), կամ համարժեքը	հատ	12100
	1.71	Սնուցման բլոկի նորոգում	հատ	2200
	1.72	Սնուցման բլոկի փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	1100
	1.73	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 350Վտ (Power suply unit for P4 Case 350w), կամ համարժեքը	հատ	5390
	1.74	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450Վտ (Power suply unit for P4 Case 450w), կամ համարժեքը	հատ	7700
	1.75	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 550վ (Power suply unit for P4 Case 550W), կամ համարժեքը	հատ	10450
	1.76	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 650վ (Power suply unit for P4 Case 650W), կամ համարժեքը	հատ	16500
	1.77	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 850վ (Power suply unit for P4 Case 850W), կամ համարժեքը	հատ	19250
	1.78	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 1000վ (Power suply unit for P4 Case 1000W), կամ համարժեքը	հատ	24200
	1.79	Ցանցային քարտի տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	550
	1.80	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100 Օրանժ (Orange NIC 10/100),կամ համարժեքը	հատ	3300
	1.81	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100 Դ-լինկ (D-link 10/100), կամ համարժեքը	հատ	3080
	1.82	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000),կամ համարժեքը	հատ	5500
	1.83	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ վայրլեսս 11մբ(Wireles NIC 11mb), կամ համարժեքը	հատ	11000
	1.84	Արտաքին ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000), կամ համարժեքը	հատ	7300
	1.85	Մարտկոց համակարգչի	հատ	500
		Նոթբուքի վերանորոգում		
	1.86	CPU, RAM փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	2200
	1.87	HDD փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	2200
	1.88	HDD, փոխարինում ներառյալ 1Tb 5400rpm 128mb 2.5" SATA for laptop նոթբուքի համար , կամ համարժեքը	հատ	35000
	1.89	HDD, փոխարինում ներառյալ 500Gb 5400rpm 128mb 2.5" SATA for laptop նոթբուքի համար , կամ համարժեքը	հատ	32000
	1.90	RAM փոխարինում ներառյալ DDR3 4Gb 1600 MHz 204pin So-DIMM, PC3L/ PC3 1.35V, 204pin, compability with more PC3 կամ համարժեքը	հատ	30000
	1.91	RAM փոխարինում ներառյալ DDR3 8Gb 1600 MHz 204pin So-DIMM, PC3L 1.35V, 204pin կամ համարժեքը	հատ	45000
	1.92	HDD, փոխարինում ներառյալ SSD SATA3 2.5", Read- 550MB/s (90000 IOPS), Write- 520MB/s (98000 IOPS), 256Mb DRAM cache memory, 3D V-NAND: TLS Flash memory component, TRIM support	հատ	57000
		Մոնիտորի վերանորոգում		
	1.93	TDKC փոխարինում առանց TDKC	հատ	3300
	1.94	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 15"	հատ	8800
	1.95	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 17"	հատ	9900
	1.96	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 19"	հատ	11000
	1.97	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 20"	հատ	15400
	1.98	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 22"	հատ	18480
	1.99	ԼՍԴ-ի մատրիցայի փոխարինում	հատ	10000
	1.100	Վերանորոգում (ֆոկուսի կարգավորում,գունահամատեղող մեխանիզմի կարգաբերում)	հատ	3080
	1.101	Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում)	հատ	3520
		Անխափան սնուցման սարքի վերանորոգում		
	1.102	Ղեկավարող սալիկի վերանորոգում	հատ	2000
	1.103	Մարտկոցի փոխարինում (առանց Մարտկոցի)	հատ	1100
	1.104	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/4Ա	հատ	8800
	1.105	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/7Ա	հատ	9240

	1.106	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/17Ա	հատ	26000
	1.107	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/24Ա	հատ	35000
		Սկաների վերանորոգում		
	1.108	Վերանորոգում (առանց պահեստամասերի)	հատ	2970
	1.109	Լամպի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	1100
	1.110	Լամպի փոխարինում ներառյալ լամպը Ա4	հատ	19800
		Համակարգչային ցանցի վերանորոգում		
	1.111	Սվիչ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	1500
	1.112	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 8 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 8 PORT), կամ համարժեքը	հատ	17500
	1.113	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 16 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 16 PORT), կամ համարժեքը	հատ	47300
	1.114	Ցանցային ուղղորդիչ Միկրոտիկ RB750 կամ համարժեքը	հատ	30500
	1.115	Ցանցային ուղղորդիչ Միկրոտիկ RB1100 AHx2 կամ համարժեքը	հատ	242000
	1.116	HP J9980A 1820-24G 1000M 24P+4SFP 888182298978 //24 x 10/100/1000 Gigabit Ethernet 4 x SFP//Web-interface / Telnet / HTTP / SNMP/15.4V / 50-60 GHz/Flow control, layer 2 switching	հատ	110000
	1.117	HP J4860C Compatible Gigabit 1000BASE-LH Singlemode Fibre Mini-GBIC/SFP Module, LC Connector	հատ	70000
	1.118	Մալուխի անցկացում (գծամետր առանց մալուխի)	հատ	120
	1.119	Մալուխի անցկացում ներառյալ Մալուխի գինը (գծամետր)	հատ	270
	1.120	Մալուխ. պղնձե 2XΦ2.5սմ²	մետր	250
	1.121	Մալուխ, պղնձե 2XΦ1.5սմ²	մետր	150
	1.122	Վարդակ	հատ	800
	1.123	Մալուխի ամրակ	հատ	10
	1.124	Լարի անցկացման աշխատանքներ	գմ	100
		Լազերային տպիչի վերանորոգում		
	1.125	Լիցքավորում (լազերային տպիչների առանց տոների)	հատ	1000
	1.126	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 1005/1006/1505(Քենոն 712)/1505,կամ համարժեքը (HP LJ 1005/1006/1505 (Canon 712)/1505, կամ համարժեքը	հատ	1600
	1.127	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ՝ ԼՋ 5L/6L (Քենոն ԵՊ Ա)/1100 (Քենոն ԵՊ 22), 1200 (Քենոն ԵՊ 25) /1300/1150/1160/1320/2015, կամ համարժեքը (HP LJ 5L/6L(Canon EP A)/HP LJ 1100(Canon EP 22) /HP LJ 1200(Canon EP 25)/1300/1150/1160/1320/2015), կամ համարժեքը	հատ	1500
	1.128	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Քենոն ԵՊ 26/27/ՖԻքս9/10 (Canon EP 26/27,FX9/10), կամ համարժեքը	հատ	1500
	1.129	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 1010,1012,1015, 1018, 1020, 1022 (HP LJ 1010,1012,1015, 1018, 1020, 1022 Q2612A (Canon 303/703)) 140 գրամ, կամ համարժեքը	հատ	1800
	1.130	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 5Պ/6Պ (HP LJ 5P/6P), կամ համարժեքը լազերային տպիչի համար	հատ	1600
	1.131	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4000/4050 (HP LJ 4000/4050), կամ համարժեքը լազերային տպիչի համար	հատ	3300
	1.132	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 2100/2200 (HP LJ 2100/2200), կամ համարժեքը լազերային տպիչի համար	հատ	3300
	1.133	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 2300 (HP LJ 2300), կամ համարժեքը լազերային տպիչի համար	հատ	3300
	1.134	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 3005 (HP LJ 3005), կամ համարժեքը	հատ	3300
	1.135	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 2420/2430 (HP LJ 2420/2430), կամ համարժեքը լազերային տպիչի համար	հատ	3300
	1.136	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4L/4Պ (HP LJ 4L/4P), կամ համարժեքը լազերային տպիչի համար	հատ	2200
	1.137	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4/4+/5 (HP LJ 4/4+/5), կամ համարժեքը լազերային տպիչի համար	հատ	2200
	1.138	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4100 (HP LJ 4100), կամ համարժեքը լազերային տպիչի համար	հատ	3300
	1.139	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4200 (HP LJ 4200), կամ համարժեքը,լազերային տպիչի համար	հատ	3300
	1.140	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4300 (HP LJ 4300), կամ համարժեքը,լազերային տպիչի համար	հատ	3300

	1.141	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4350 (HP LJ 4350), կամ համարժեքը,լազերային տպիչի համար	հատ	3300
	1.142	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 5000 /5100/5200 (HP LJ 5000/5100/5200), կամ համարժեքը	հատ	3300
	1.143	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 8100/8150 (HP LJ 8100/8150), կամ համարժեքը	հատ	4400
	1.144	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 1600/2600 (HP LJ 1600/2600), կամ համարժեքը, լազերային տպիչի համար	հատ	9900
	1.145	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոներըՀՊ ԼՋ 2500/2550 (HP LJ 2500/2550), կամ համարժեքը	հատ	8800
	1.146	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 3500/3550/3600 (HP LJ 3500/3550/3600), կամ համարժեքը	հատ	7700
	1.147	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4600/4700 (HP LJ 4600/4700), կամ համարժեքը	հատ	8800
	1.148	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Քսերոքս Պ8ե/Պ16ե/3200/5400 (Xerox P8e/P16e/3200/5400),կամ համարժեքը	հատ	1600
	1.149	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Էպսոն ԵՊԼ 6200 (Epson EPL 6200), կամ համարժեքը	հատ	1800
	1.150	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Էպսոն Ց900/1100/1900 (Epson C900/1100/1900) կամ համարժեքը	հատ	6600
	1.151	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Լեքսմարկ Ե250/260 (Lexmark E250/260) կամ համարժեքը	հատ	1800
	1.152	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Բրազեռ ՊԼ1240 (Brother PL1240) կամ համարժեքը	հատ	1800
	1.153	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Սամսունգ ՄԼ 1210/1610 (Samsung ML 1210/1610) կամ համարժեքը	հատ	1700
	1.154	Լիցքավորում Ricoh SP 150SU կամ համարժեք տպիչ/պատճենահանման մեքենա/սկաների (բազմաֆունկցիոնալ լազերային) ներառյալ տոները	հատ	2000
	1.155	Վերանորոգում Ricoh SP 150SU կամ համարժեք տպիչ/պատճենահանման մեքենա/սկաների (բազմաֆունկցիոնալ) ներառյալ պահեստամասերը	հատ	2000
	1.156	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Դելլ 1720 (Dell 1720) կամ համարժեքը	հատ	1700
	1.157	Լիցքավորում լազերային տպիչների (սև) ներառյալ քարթրիջի չիպը, կամ համարժեքը	հատ	3500
	1.158	Լիցքավորում լազերային տպիչների (գունավոր) ներառյալ քարթրիջի չիպը, կամ համարժեքը	հատ	9900
	1.159	Վերանորոգում (առանց պահեստամասերի)	հատ	2200
	1.160	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում (առանց թերմոթաղանթի)	հատ	1500
	1.161	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում ներառյալ թերմոթաղանթ (HP/Canon կամ համարժեքը)	հատ	6500
	1.162	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	1500
	1.163	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Տեֆլոնե լիսեռ (HP/Canon կամ համարժեքը)	հատ	11000
	1.164	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	1500
	1.165	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ (HP/Canon կամ համարժեքը)	հատ	6600
	1.166	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման (առանց պահեստամասերի)	հատ	1100
	1.167	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկ Laser Jet ՀՊ ԼՋ 1005/1006/1505(Քենոն 712)/1505,կամ համարժեքը (HP LJ 1005/1006/1505(Canon 712)/1505, կամ համարժեքը	հատ	3500
	1.168	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկ Laser Jet 1100/5L/6L/4L/4P/1200/1150/1300/2100/4000(Canon LBP 800/810/1120/2900/1210) կամ համարժեքը	հատ	3500
	1.169	Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Կարատրոնը Laser Jet HP 1100/5L/6L/4L/4P/1200/1150/1300/2100/4000(Canon LBP 800/810/1120/2900/1210) կամ համարժեքը	հատ	3000
	1.170	Մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը Laser Jet ՀՊ ԼՋ 1005/1006/1505(Քենոն 712)/1505, կամ համարժեքը (HP LJ 1005/1006/1505(Canon 712)/1505, կամ համարժեքը	հատ	3300
	1.171	Մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը Laser Jet HP 1100/5L/6L/4L/4P/1200/1150/1300/2100/4000(Canon LBP 800/810/1120/2900/1210) կամ համարժեքը	հատ	4500
	1.172	Մաքրող դանակի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	1100
	1.173	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ (HP LJ, Canon LBP կամ համարժեքը)	հատ	3100

	1.174	Բաժանիչ հարթակի փոխարինում	հատ	1700
	1.175	Բաժանիչ հարթակի փոխարինում ներառյալ Բաժանիչ հարթակ (HP LJ ,Canon LBP կամ համարժեքը)	հատ	4300
	1.176	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում	հատ	1700
	1.177	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Թղթի տրման ռետինե լիսեռ (HP LJ, Canon LBP կամ համարժեքը)	հատ	4400
		Թանաքաշիթային տպիչի վերանորոգում		
	1.178	Վերանորոգում (առանց պահեստամասերի)	հատ	3300
	1.179	Լիցքավորում սև ներկով 10 մլ և պակաս քանակով, կամ համարժեքը	հատ	1300
	1.180	Լիցքավորում գունավոր ներկով 10 մլ և պակաս քանակով, կամ համարժեքը	հատ	1400
	1.181	Լիցքավորում սև ներկով 10-20 մլ քանակով, կամ համարժեքը	հատ	2800
	1.182	Լիցքավորում գունավոր ներկով 10-20 մլ քանակով, կամ համարժեքը	հատ	2800
	1.183	Լիցքավորում սև ներկով 20 մլ-ից ավել քանակով, կամ համարժեքը	հատ	3100
	1.184	Լիցքավորում գունավոր ներկով 20 մլ-ից ավել քանակով, կամ համարժեքը	հատ	3300
		Պատճենահանող սարքի վերանորոգում		
	1.185	Վերանորոգում (առանց պահեստամասերի) սև	հատ	4000
	1.186	Վերանորոգում (առանց պահեստամասերի) գունավոր	հատ	3000
	1.187	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Քենոն ՖՍ (Canon FC), կամ համարժեքը	հատ	1700
	1.188	Տոների Լիցքավորում ներառյալ Քենոն Ջ-1, 1215/1520/6216/6317 (Canon G-1, 1215/1520/6216/6317),կամ համարժեքը պատճենահանի համար	հատ	3200
	1.189	Տոների Լիցքավորում ներառյալ Քենոն NP7161/iR1600/iR2016 (Canon NP7161/iR1600/iR2016),կամ համարժեքը պատճենահանի համար	հատ	6200
	1.190	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	3300
	1.191	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի տեֆլոնե լիսեռ Canon 1215/6216/6317/1520/7161/1600 կամ համարժեքը	հատ	12000
	1.192	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում ներառյալ Վառարանի տեֆլոնե լիսեռ Canon 1018/2016/2018 կամ համարժեքը	հատ	11000
	1.193	Վառարանի ռեզինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ Canon 1215/6216/6317/1520/7161/1600/2016/2018 կամ համարժեքը	հատ	11000
	1.194	Վառարանի ռեզինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ Canon 6012/6512/1018/1022 կամ համարժեքը	հատ	12500
	1.195	Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	2200
	1.196	Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ֆետրե լիսեռ Canon 1215/6216/6317/1520/7161/1600/2016/2018 կամ համարժեքը	հատ	6000
	1.197	Թմբուկի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	1700
	1.198	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon FC կամ համարժեքը	հատ	7000
	1.199	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon 1215/6216/6317/1520 կամ համարժեքը	հատ	10000
	1.200	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon 6012/6512/1018/1022 կամ համարժեքը	հատ	11000
	1.201	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon 7161/1600/2016/2018 կամ համարժեքը	հատ	16500
	1.202	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ Canon 1215/6216/6317/1520/7161/1600/2016/2018 կամ համարժեքը	հատ	5500
	1.203	Սքանների լամպի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	2200
	1.204	Սքանների Լամպի փոխարինում ներառյալ Լամպը A4 , կամ համարժեքը	հատ	9900
	1.205	Սքանների Լամպի փոխարինում ներառյալ Լամպը A3 լումինիսցենտային, կամ համարժեքը	հատ	11000
	1.206	Վառարանի լամպի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	2200
	1.207	Վառարանի լամպի փոխարինում ներառյալ Լամպը	հատ	11000
	1.208	Վառարանի ատամնանիվի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	2200
	1.209	Վառարանի ատամնանիվի փոխարինում ներառյալ ատամնանիվը	հատ	6200
	1.210	Շարժիչի շարժաբերի ատամնանիվի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	3300
	1.211	Շարժիչի շարժաբերի ատամնանիվի փոխարինում ներառյալ ատամնանիվը	հատ	8800
	1.212	Կարոտրոնի բլոկի փոխարինում	հատ	3300
	1.213	Կարոտրոնի լարի փոխարինում	հատ	1700

Հավելված №2
«29» «12» 2020թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04-1» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	***ԿԱՏԱՐՈՂ***
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Բևեռային ուղի» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Մանանդյան 25շ., բն.6
ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 90011018646	ՀՀ 15!0032345990100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02228306

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2021թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար ծառայության մատուցման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «29» «12» 2020 թ.
Պայմանագրի համարը՝ «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04-1»

Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2021 թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №2.1
«29» «12» 2020թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «29» «12» 2020 թվականին կնքված № «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04-1» գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2021 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«29» դեկտեմբերի 2020թ. N ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04-1 պայմանագրի

ք.Երևան «26» «01» 2021թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գուլյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2215-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04-1» ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04-1» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Բևեռային ուղի» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Մանանդյան 25շ., բն.6
ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 1510032345990100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02228306
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«Բևեռային ուղի» ՍՊԸ-ի տնօրեն
Գ.Գուլյան	**Ա.Հակոբյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
«26» «01» 2021թ. կնքված
համաձայնագիր №1
№ «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04-1» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Գ.Գույան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ-ի
տնօրեն
Ա.Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	50311120/1	Համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ծառայություններ	-	50 000	50 000	260 000	260 000	260 000	500 000	500 000	500 000	900 000	900 000	900 000	**6 000 000**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Համակարգչային սարքերի և սարքավորումների, օդորակիչների սպասարկման և վերանորոգման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/04-1» ծածկագրով պայմանագրում 2021 թվականի հունվարի 26-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Գնումը կատարվել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու պայմանով,
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագիրը լրացվել է վճարման ժամանակացույց հավելվածով,
Փոփոխության հիմնավորում՝	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով կնքված պայմանագիր: Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-529:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**